ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ

Տեղեկատվական նամակ

Հարգելի գործընկերներ,

2025 թվականին լրանում է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի հիմնադրման 70 ամյակը։

Հրավիրում ենք մեզ հետ տոնելու և մասնակցելու «ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ» հոբելյանական միջազգային գիտաժողովին, որը կանցկացվի սեպտեմբերի 15-17-ին։ Լիագումար նիստը տեղի կունենա սեպտեմբերի 15-ին՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում (Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 24), իսկ թեմատիկ ուղղություններով զեկույցները սեպտեմբերի 16-17-ին՝ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան Տնտեսագիտության ինստիտուտի շենքում (Երևան, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ 15)։

Գիտաժողովն կացկացվի հիբրիդային եղանակով։ Գիտաժողովի թեմատիկ ուղղությունները, կանոնակարգը, կոնտակտային տվյալները (տեղեկատվական նամակ) և դիմումի ձևը ներկայացված են։

Միջոցառման հիմնական նպատակն է ներկայացնել միջոցառման մասնակիցների գիտական գործունեության հիմնական ոլորտները՝ ընդլայնելով փոխշահավետ գիտական համագործակցության աշխարհագրությունը և քննարկել տնտեսության նորաստեղծական զարգացման և ռազմավարական կառավարման հիմնահարցերին ուղղված համատեղ գիտական նախագծերի գործնական իրականացման հնարավորությունները։

Գիտաժողովի գիտական նստաշրջանի շրջանակներում նախատեսվում է քննարկել միջոցառման մասնակիցների զեկույցները հետևյալ ուղղություններով.

Գիտաժողովի թեմատիկ ուղղությունները

1. Մակրոտնտեսական ցուցանիշների զարգացման միտումները
2. Ֆինանսական քաղաքականության առաջնահերթություններ
3. Ռազմավարական կառավարում

4. Նորաստեղծական զարգացում. նվաճումներ և խնդիրներ

5. Ժողովրդագրություն, զբաղվածություն և կենսամակարդակ

6. Տնտեսության իրական հատվածի առաջնահերթությունները և զարգացման մակարդակը

7. Ծառայությունների ոլորտի զարգացման առաջնահերթություններն ու խնդիրները

8. Վարքագծային տնտեսագիտություն. կանխադրված ընտրության ուժը

Գիտաժողովի մասնակցությանը և նյութերին ներկայացվող պահանջները.

1. Համառոտագրի ներկայացում մինչև 31/07/2025թ. (սահմանված ժամկետից ուշ ներկայացված համառոտագրերին ընթացք չի տրվի)։

Համառոտագրի հետ պետք է ներկայացնել հոդվածի վերնագիրը և հեղինակի/ների տվյալները՝ ամբողջական ազգանուն, անուն, հայրանուն, գիտական աստիճան, կոչում, աշխատանքի վայր, հեռախոսահամար, էլեկտրոնային հասցե, ORCID ID (տվյալները պահանջվում են բոլոր հեղինակների համար)։

Համառոտագիրը պետք է պարունակի 200-300 բառ, ամփոփի թեմայի արդիականությունը, նպատակը, խնդիրները, ուսումնասիրության մեթոդը, եզրակացությունները և արդյունքները։ Համառոտագրի հետ պետք է ներկայացնել բանալի բառեր՝ ոչ ավել, քան 7-ը, որոնք պետք է բնութագրեն հոդվածը։ Հոդվածի վերնագիրը, հեղինակի/ների տվյալները, համառոտագիրը և բանալի բառերը պետք է ներկայացնել հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով։

Տնտեսագիտության ինստիտուտի խմբագրական խորհրդի կողմից կստուգվի ներկայացված համառոտագրի և բանալի բառերի համապատասխանությունը միջազգային գիտաժողովի թեմատիկ և տեխնիկական պահանջներին։ Էլեկտրոնային փոստի միջոցով հեղինակը (գրագրության կապ պահող հեղինակը) կտեղեկացվի համառոտագրի համապատասխանելու/կամ չհամապատասխանելու վերաբերյալ։

2. Ամբողջական հոդվածի ներկայացում մինչև 29/08/2025թ. (սահմանված ժամկետից ուշ ներկայացված հոդվածներին ընթացք չի տրվի)

Հոդվածը պետք է լինի 10-15 էջի սահմաններում՝ ներառյալ գծապատկերներ, աղյուսակներ, պատկերներ, օգտագործված գրականության ցանկ։ Հոդվածը պետք է ունենա

ներածություն, գրականության ակնարկ, մեթոդաբանություն, վերլուծություն, եզրակացություններ, առաջարկություններ հիմնական բաժինները։

Ներածությունում պետք է ներկայացնել հետազոտվող թեմայի արդիականությունը, նպատակը, առաջադրված խնդիրները, թեմայի ուսումնասիրվածության աստիճանը։

Գրականության ակնարկը պետք է ամփոփի թեմայի վերաբերյալ վերջին տարիներին ներկայացված այլ հեղինակների մոտեցումները, ոչ պակաս, քան 10-ը։

Մեթոդաբանության բաժնում պետք է ներկայացնել ուսումնասիրության հիմնական մեթոդը և օգտագործված թվական տվյալների բազան։

Վերլուծության բաժինը պետք է ներառի առաջադրված խնդիրների պարզաբանումը և կարող է ներկայացվել ենթահարցերով։

Եզրակացություններ բաժնում պետք է ներկայացնել առաջադրված նպատակին հասնելու համար ստացված արդյունքները։

Առաջարկություններ բաժնում պետք է ներկայացնել հետազոտության արդյունքների կիրառական մոտեցումները։

Հոդվածում այլ հեղինակների մոտեցումներին և թվական տվյալներին պետք է տալ հղում՝ էջի վերջում։ Գիտական հոդվածից հղումը պետք է ներառի՝ հեղինակի/ների ազգանունը, անվան առաջին տառը, տարեթիվը, հոդվածի անվանումը, հոդվածը հրապարակած ամսագրի անվանումը, օգտագործված մտքի էջը, DOI, գրքից հղումը՝ հեղինակի/ների ազգանունը, անվան առաջին տառը, տարեթիվը, գրքի անվանումը, տպագրության վայրը, օգտագործված մտքի էջը։ Լրատվական հրապարակումներին, դասագրքերին և ուսումնական ձեռնարկներին հղում անել չի կարելի։

Հոդվածի վերջում պետք է ներկայացնել գրականության ցանկ՝ ամփոփելով բոլոր հղումները՝ բնագրի լեզվով, պետք է պահպանել օրենքներ, իրավական ակտեր, հաշվետվություններ, գրքեր, հոդվածներ, կայք էջեր ներկայացման և այբբենական հաջորդականությունը (հայերեն, ռուսերեն, անգլերեն)։

Հոդվածի համապատասխանությունը միջազգային գիտաժողովի տեխնիկական պահանջներին կստուգվի Տնտեսագիտության ինստիտուտի խմբագրական խորհրդի կողմից։

Էլեկտրոնային փոստի միջոցով հեղինակը (գրագրության կապ պահող հեղինակը) կտեղեկացվի հոդվածի տեխնիկական համապատասխանելիության վերաբերյալ։

Խմբագրական խորհրդի կողմից հաստատված հոդվածը պետք է անցնի երկու կույր գրախոսում, որի արդյունքում հոդվածը կարող է 1. երաշխավորվել հրապարակման, 2. երաշխավորվել հրապարակման որոշ փոփոխություններից հետո կամ 3. չթույլատրվել հրապարակման։ Գրախոսությունները ներկայացվում են հեղինակին (գրագրության կապ պահող հեղինակին)՝ էլեկտրոնային փոստի միջոցով։

Հոդվածի և համառոտագրի համակարգչային կազմման պահանջները ընդհանուր են։

Պետք է ներկայացնել Microsoft Word Document (.docx), B5 ձևաչափով, թղթի եզրերից թողնել 2սմ, Sylfaen (հայերեն) և Times New Roman (անգլերեն և ռուսերեն) տառատեսակով, 11 pt տառաչափով, տողերի միջակայքը 1.0, վերնագիրը, հեղինակի/ների տվյալները թավատառ, մեծատառերով, բաժինները՝ մեծատառերով։

Գիտաժողովին մասնակցությունն անվճար է։

Գիտաժողովի աշխատանքային լեզուներն են՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն։

Լավագույն նյութերը կհրապարակվեն գիտաժողովի նյութերում՝ ISBN և DOI համարներով։

Գիտաժողովի ծրագիրը, միջոցառման ժամանակի և միջոցառման առցանց միանալու հղման մասին ավելի մանրամասն տեղեկատվությունը կուղարկվեն լրացուցիչ։

Դիմումների և համառոտագրերի ներկայացման վերջնաժամկետն է 2025 թվականի հուլիսի 31-ը (ներառյալ)։

Հոդվածների ներկայացման վերջնաժամկետն է 2025 թվականի օգոստոսի 29-ը (ներառյալ)։

Մեր հասցեն՝ 0015, Երևան, Սուրբ Գրիգոր Լուսավորչի փողոց, 15, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան Տնտեսագիտության ինստիտուտ։

Էլ. փոստ՝ editoreconomics.sci@gmail.com, հեռ.՝ +(374) 10581971։